



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ

09/հունվարի /2023 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Վ. Ներսիսյան, Վ. Նիկողոսյան, Մ. Նիկողոսյան,
Ն. Շահինյան, Զ. Դարբասյան, Ն. Մանուկյան:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Խաչատրյանը, գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներ Ս. Մկրտչյանը և Ա. Բագրատյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Սարգսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 9-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1.1. Զերմուկ համայնքի բյուջեի միջոցների 2023 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի օգտագործման մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Զերմուկ համայնքում մասնակցային բյուջետավարման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Զերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----- Պեմ----- Ձեռնպահ-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 1-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան՝

1. Զերմուկ համայնքի բյուջեի վարչական մասի 2023 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի 31,969,066.9 (երեսունմեկ միլիոն իննը հարյուր վաթսուինը հազար վաթսուներեք դրամ իննսուն լումա) գումարն ուղղել նախորդ բյուջետային տարում բյուջեի վարչական մասի ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա՝ էներգետիկ, կապի, կոմունալ, մասնագիտական և հարկային պարտավորությունների մարմանը, ապրանքանյութական արժեքների, պաշարների ձեռք բերմանը, իսկ ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 130,732,977.1 (մեկ հարյուր երեսուն միլիոն յոթ հարյուր երեսուններկու հազար ինը հարյուր յոթանասունյոթ դրամ, 10 լումա) գումարն ուղղել կապիտալ ծախսերի (սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում որպես համայնքի ներդրում) համաֆինանսավորմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----- Պեմ----- Ձեռնպահ-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 2-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, 37-րդ և 84-րդ հոդվածները և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեում հատկացնել հինգ միլիոն ՀՀ դրամ՝ 2023 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավարման գործընթաց իրականացնելու նպատակով:

2. Սահմանել, որ՝

1) մասնակցային բյուջետավարման գործընթացի իրականացման համար կիրառելի են բյուջետային օրենսդրությամբ սահմանված բոլոր գործառնական ոլորտները՝ համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի համար:

2) մասնակցային բյուջետավարման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն համայնքի բնակիչները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (հասարակական կազմակերպություններ, արհեստակցական միություններ, մասնագիտական ասոցիացիաներ, մեդիա խմբեր, հիմնադրամներ և քաղաքացիների այլ խմբեր)

3) մասնակցային բյուջետավարման գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը, որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանում, բյուջեում և 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրում՝ համայնքի բնակիչների կողմից քվերակության արդյունքում ընտրված առաջարկը (ները) ներկայացնելով ավագանու հավանությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-----Ց-----Դեմ-----Չեռնպահ-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3-Ա/

Լսեցին

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու՝ 2023 թվականի հունվարի 9-ի N 2-Ա և N 3-Ա որոշումների կատարմամբ պայմանավորված՝ հաստատել Ջերմուկ համայնքի 2022 թվականի բյուջեում կատարված հետևյալ փոփոխությունները՝

1.1 «1-3-3-51- ընդհանուր բնյութի հանրային ծառայություններ» գործառնական ոլորտի «4232-համակարգչային ծառայություններ», «4235- կառավարչական ծառայություններ», «4657-այլ կապիտալ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածները ավելացնել համապատասխանաբար 500.0 հազար, 1000.0 հազար և 5000.0 հազար ՀՀ դրամներով:

1.2 «4.5.5-53-խողովակաշարային և այլ տրանսպորտ» գործառնական ոլորտի «4252-մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում», «4861-այլ կապիտալ ծախսեր» տնտեսագիտական հոդվածները ավելացնել համապատասխանաբար 3000.0 հազար և 9000.0 հազար ՀՀ դրամներով:

1.3 «1-1-1-51- օրենսդիր, գործադիր մարմիններ, պետական կառավարում» գործառնական ոլորտի «4111- աշխատավարձ և նրան հավասարեցված վճարումներ» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 2599.3 հազար ՀՀ դրամով

1.4 «6-1-1-51- բնակարանային շինարարություն» գործառնական ոլորտի «4861- այլ կապիտալ ծախսեր» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 2000.0 հազար ՀՀ դրամով

1.5 «8-4-1-51-երիտասարդական ծրագրեր» գործառնական ոլորտի «4229-տրանսպորտային ծախսեր» և «այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածները ավելացնել 1000.0 հազարական ՀՀ դրամով:

1.6 «10-4-1-51- ընտանիքի անդամներ և զավակներ» գործառնական ոլորտի «4729- այլ նպասներ բյուջեից» տնտեսագիտական հոդվածը 1500.0 հազար ՀՀ դրամով:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ ի գիտություն ընդունել Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեն՝ ս/թ հունվարի 9-ի դրությամբ՝

1.1 Եկամուտների գծով՝ 762,980.9 հազար դրամ.

1.2 Ծախսերի գծով՝ 925683.0 հազար դրամ

1.3. Հավելուրդը կամ պակասորդը՝ 162702.1 հազար դրամ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 4-Ն/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	բալյան
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	Սարգսյան
Խաչատրյան Գոհար Բաբկենի	Զեքեր
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	բալյան
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	բալյան
Մնացականյան Արկադի Ալբերտի	բալյան
Գևորգյան Մանան Աղվանի	Գևորգ
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բալյան
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	բալյան

Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝



Վարդան Սարգսյան _____

Նիստին արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____


